պարտականութիւն է և բնական համեստութիւն. մեծի պարտքն է և պարծանքն է լինել և գործել մեծագոյնը։ Իմ համար նշանակութիւն ունի աղքատ գեղջուկի գործը, թէ և իւր պէս դարձեալ աղքատ և գեղջուկ լինին այդ գործերը՝ այդպէսին էլ ուղիղ համեմատութիւն է։ Ոչ ինչ բան անտեղի չէ քան թէ անգործութիւն և մեռելութիւն մէկ խօսքով։ Երկրագործութիւնը ամենահաստատուն հացն է մարդու համար՝ ապահով լինելով երկրագործութեան հացովը. մարդս կարող է լինել երջանիկ՝ միայն թէ գիտակցութիւն ևս ունենար իւր այդ ասուած երջանկութեան։ Եւ նա, որ ուսուցանում է գիւղացուն, տալիս է նորան ահա այս գիտակցութիւնը՝ որով և կացուցանում է նորան երջանիկ։

Ե.

Հասարակաց օգտին ծառայելը քրիստոնէական և մարդկային պարտք է. նա ինքն իւր վարձատրութիւն, մխիթարութիւն, յոյս, նպատակ և ամեն բան էլ է բարոյական կողմի համար. բայց գալով նիւթականին, և մտածելով՝ որ մարդս ըստ մեծի մասին նիւթական է, ապա հեռացնելու է, թէ նորան ևս պիտոյ է և նիւթական փոխարինութիւն։

Երկնքի և երկրի բարիքը վայելելով մենք պաշտում ենք Աստուած. արքայութեան ակնկալութեամբ լինում ենք առաքինի։ Այս համառօտ խորհրդածութիւնքը առաջարկելով ժողովրդին և ժողովրդի հովիւներին՝ դառն ենք մեր միւս մասին։

Ա. Յ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Վ. ԵՍԱԿԻ ԵՊԻՇԿՈՍՈՒԹԻՒՆՔԸ.

Վշտերից չարատանջ Հայ—Վասակն ուրացած
Շրջում էր թափառուն անհանգիստ-երերված.
Այսպէս նա քրտնաժոր արևով միջօրեայ
Կանգ առաւ հանգչելու կաղնու տակ հինօրեայ։
Ծաղկեցան ծունկերը, թեք տուեց արմունկին,
Խոր հոգւոց քաշելով աչք ածեց դէպ երկին.
Եւ կարծես բիւր ասեղ, բիւր նիզակ ու սուսեր
Երկնքի թագուհին սիրտն ի խոր կըցցեր։
Նա կրկին հառաչեց, և ձայնով դող ի դող
Կողկողաց դէպ արև, որ կալած թեթև քող
Սպիտակ որպէս ձիւն փետրային ամպերից
Կամենում չէր ցոյց տալ մի մարդու մեղսալից։
Իւր պատկեր կուսական, մի մարդու դաւաճան,
Որ բերել էր ամօթ մարդկային վեհ անուան.
Հառաչեց, կողկողաց դառնութեամբ լալագին
Դէպ ի հարսն ամբիծ կամարին երկնային։
"Լուսատուդ փառահեղ, թագուհիդ աստղերի,
Գերապանծ նազելիդ կապուտակ կամարի,
Որ անզարդ այս երկրին պարգևում ես դու կեանք,
Զօնելով հողածնին լուսածին փայփայանք։
"Դու, որիդ կենարար շողերովը ջերմիկ
Կցնծայ ու կերգէ և՛ ամեն մի թռչնիկ,
Աղաչում եմ նայիր թշուառիս քաղցրաբար
Կհասնէ՞, ո՞հ, արդեօք տանջանացս կատար։
Ո՞հ, դու, աչքդ ի՛ ստուծոյ՝ ի հսկումն աշխարհիս,
Երբ կգայ ինձ փրկել բոպէն իմ մահիս,
Ո՞հ, ասա, աղաչեմ, արդեօք Տէրն երկնքի,
Երբ այստեղ հասանէ վախճանը իմ կեանքի,
Վճռած չէ՞ մատնելու աղէտքի մշտական
Մի ինձ պէս... սարսափիմ... աղղաղրուժ դաւաճան։"
"Աղղաղրուժ"..նա կրկնեց, և հողին տատանեց,
"Դաւաճա՜ն".. հեկեկաց, և արցունք յորդ թափեց։
"Վա՜յ ու վա՜յ թշուառիս, ի՞նչ սարսափ ահարկու...
"Ուղարկիր, ո՛վ երկինք, ինձ մի շանթ մահատու.."
Այս գոչեց, թմրեցաւ և մի նինջ ծանրացած
Արնալից աչքերին Վասակի ընկաւ ցած.

Պատառված էր սիրտը, վրդովված և հոգին
Սևատանջ երևոյթք խայթերով մղեցին
Ցանցաւոր իշխանի սիրտը սև վատթար
Բիւրաւոր աղէտքով տանջէին չարաչար։
Դադարում չտուին նորան ևս պատկերներ,—
Վեր ցատքեց փրփրած և թռաւ դէպ սարեր,
Կանգնեցաւ եղերքին անյատակ մի ժայռի
Եւ սրտով յուսաթեկ և հոգւով անարի,
Տանջանքից փրկուելու խորհում էր նա հնար,
Դիւատանջ օրերին միանգամ տալ կատար,
Ակնածեց չորեքշուրջ, դէպ ի հող, դէպ եթեր
Բարդ ի բարդ նա տեսաւ լողալիս սև ամպեր,
Իւր հառաչք քամու հետ արձակեց հառ ընդ հատ,
"Ո՛վ ձորեր անյատակ, դուք ժայռեր ձիւնապատ,
Որոնցդ հերիք է գէթ քամի մի թեթև
Որ քարեայ զանգուածներ կործանէք դէպ ներքև,
"Ո՜հ, ընկէք քանդուեցէք իմ գլխին չարաջան,
Ծածկեցէք իմ փոշին սուրբ հողի անարժան։
Ո՜հ, ինչպէս կատաղի դէպ խրճիթն անմեղիկ
Հեգ հովուին թնդում է անխնայ փոթորիկ
"Կործանել ուզելով այն անմեղ արարած,
Որ ի սէր, որ ի բարդ ընկերին է ուխտած։
Երանի՜, երանի՜, որ իմ անձրս թշուառ
Կարենար զոհ գնալ մի շանթի մահարար...
"Բայց վիժե՜մ թող մարմինս այս ժայռից վայր ի ձոր,
Որ ոսկերքն իմ փտած անձաւքումն դարևոր
Գերեզման դառնեն, կամ թռչկան հողմերով
Ցրիւ դայ իմ փոշին շրջակայ կողմերով։
"Չկայ ինձ փրկութիւն ոչ մի տեղ յաւիտեան,
Ո՜հ, եղայ ես ծախող հեգ ազգիս սուրբ արեան.
Զգում եմ, որ ահա սառել է իմ արիւն...
Մաղթում եմ վերջապէս, ով երկինք, թողութիւն"...։

Հեկեկաց և կամէր խորքի մէջ անյատակ
Գլորվիլ և դառնալ ժժոխքի նահատակ.
Բայց ոգին Մասիսի ճախրելով թեւարաց
Երևաց աչքերին Վասակին ազգուրաց։
—Կա՛ց թշուառ, կա՛ց անմիտ, և լսիր իմ խօսքին,
Տեղ չունի ոչ ուրեք քո մարմին, քո հոգին,
Թէև ծանր են քեզի ցուրտ կեանքիդ դառն աւուրք,
Բայց չլինէ՞ որ ներկես պիղծ արեամբդ այս աֆունք։
"Իմացիր, քանի որ լուսնակը դողդոջուն,
Կփայլէ յԱւարայր, և քանի կարկաջուն
Կվազէ պղ դաշտիչ Ցղմուտը արնահոս,
Կամ այն ինչ կշրջին ստուերներ լուռ, անխօս
Գերեզմանք քաջերի, կամ տխուր հառաչանք
Բուերի՝ յետ կտայ ճեղքերիս արձագանգ.—
Կտիրէ ամբարիշտ և գոռոզ քո հոգուն
Մասիսին սպասաւոր մի ոգի միշտ անքուն։
"Թող երբեմն իջանէ դէմքիդ նինջ իբր սփոփիչ,
Բայց հոգիդ սորանից ստանալ չունի ինչ.
Կան մտքեր—նրանց երբէք մոռանալ չէ հնար.
Կան ստուերք—որոնցից թաքչելու չկայ ճար"։
"Իմացիր, որ թէև չառնու քեզ իմ հայեացք,
Բայց կրգաս, որ հետքիդդ եմ ուղղած իմ ընթացք.
Հաւատաս աչքերիդ թէ ինձի կտեսնես,
Գաղտնի ահդ ցոյց տալով միշտ քեզի առ երես՝
"Սարսափանք, զարհուրանք, տատանման ելևէջ,
Պատրաստ կամ թափելու սևամաղձ սրտիդ մէջ.
Քեզ անէծք յորինել—երգում են անդադար
Մասիսի ոգիներ ի նորայն ի կատար։
"Վկայ է այս խօսքիս քո պղծագործութիւն
Եւ կեղտոտ փառքերի քո փափագն ապարդիւն,
Անագան զղջմունքիդ և արցունքն անագան,
Որ ժժոխք սիտ լինի անձդ ինքն ինքեան,
"Գարշ վատթար մատնու թեւամբդ ուխտին Ցեսուն որդւոյ
Կմնաչէ չարչարանք ցաւարէկ սիրտը քո.
Եւ մահը միշտ հեռու քեզանից կփախչէ,
Երբէք քուն սփոփիչ աչքիդ մոտ դալու չէ.
Դեռ երկար պիտի խնդրես կատարածը կեանքիդ.
Բայց ի զո՞ւր,—շատ դժուար կհանես բաղձանքիդ,
Թողնում եմ քեզ ա՜հա իմ անէծքը վերջին,—
Փոխանակ որ հասցրիր նախատինք քո ազգի՝,
Ուրացար և անգին երախտիքն Ցիսուսի՝
Թող մնայ քեզ բաժին ծանրութիւն ցաւերի"։

Հ. Պ. Ղ-ոլ-ոյեանց

Ի Ջոհրի